# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն   N 26

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<28>> նոյեմբերի 2022թ.                                                                                    ք. Երևան

2022 թվականի նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ա. Սիմոնյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| Ա. Խաչատրյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| Ա. Ստեփանյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար |
| Խ. Սողոմոնյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ |
| Տ. Գասպարյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային  օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ: |

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի անդամներ Ս. Բաղինյանը և Ռ. Այվազյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու  քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 6 հայտերի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության լիցենզիա տրամադրելու համար ներկայացված 4 հայտերի և լիցենզիայի նոր ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

4. Տրանսպորտային միձոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

**1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում**

**1.1** Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Դավիթ Անդրանիկի Մարդանյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 28-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 9-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, գյուղ Բերդավան, 2-րդ փողոց 27 հասցեում: 2022 թվականի նոյեմբերի 9-ին ի լրումն ներկայացված հայտի՝ Կազմակերպությունը ներկայացրել է արտադրական վտանգավոր օբյեկտի փորձաքննության եզրակացությունները:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից, որի արդյունքների վերաբերյալ տեղեկացվել մտից 11.11.2022թ. մտից 59534-2022 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ԴԱՎԻԹ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐԴԱՆՅԱՆ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**1.2** Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Արշավիր Արայիկի Արշակյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 11-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հոկտեմբերի 21-ին և նոյեմբերի 3-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 11-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու հայտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գառնի, Ազատամարտիկների խճուղի 1/4 հասցեում:

2022 թվականի հոկտեմբերի 21-ին Կազմակերպությունը ներկայացրել է նոր նյութեր, իսկ արտադրական տարածքում Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտում իրականացնելու ժամանակ հայտնաբերված թերությունների ուղղման վերաբերյալ նյութերը ներկայացվել է նոյեմբերի 3-ին:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Տ. Գասպարյանի և Ա. Ստեփանյանի կողմից՝ արտադրական տարածքում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ԱՐՇԱՎԻՐ ԱՐԱՅԻԿԻ ԱՐՇԱԿՅԱՆ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**1.3** Քննարկվեց՝

«ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 10-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 23-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 10-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական

վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Էջմիածին-Երևան մայրուղի թիվ 2/2 հասցեում:

Կազմակերպության արտադրական բազայում հանձնաժողովի անդամ Ա. Ստեփանյանի կողմից կատարված ուսումնասիրությունից հետո պարզվեց, որ տարածքը կահավորված չէր տեսանկարահանող սարքավորումներով և բացակայում էր գազազերծման կետը, իսկ տեղադրման տեղամասը ամբողջությամբ կահավորված չէր սարքավորումներով:

2022 թվականի նոյեմբերի 23-ին Կազմակերպությունը ներկայացրել է նոր նյութեր, որոնք վկայում են, որ տարածքում տեղադրվել են գազազերծման կետ և տեսանկարահանող սարքավորում, միաժամանակ ներկայացնելով նոր հայտ Ձև 2՝ հայցելով միայն գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| «ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**1.4** Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Սամվել Դավիթի Տիտանյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 10-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 19-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, Ալավերդի-Բագրատաշեն մայրուղի թիվ 3 շինություն հասցեում:

2022 թվականի նոյեմբերի 10-ին ի լրումն ներկայացված հայտի՝ Կազմակերպությունը ներկայացրել է աշխատակիցների որակավորման վկայականները, արտադրական վտանգավոր օբյեկտի փորձաքննության եզրակացությունը, տարածքի հատակագիծը և նոր հայտ Ձև 2՝ հայցելով միայն գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր:

Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, որի արդյունքների վերաբերյալ տեղեկացվել մտից 23.11.2022թ. մտից 61894-2022 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ՍԱՄՎԵԼ ԴԱՎԻԹԻ ՏԻՏԱՆՅԱՆ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**1.5** Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Աղասի Կառլենի Մնացականյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 2-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և տրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 2-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և տրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո 04.11.2022թ. ԱՄ/25.1/29813-2022 գրությամբ հայտատուին տեղեկացվել է լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա են թերության վերաբերյալ, մասնավորապես առ այն, որ Կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիայի տրամադրման հայտին կից ներկայացված փաստաթղթերում որպես արտադրական բազա ներկայացված է Արմավիրի մարզի, Փարաքար գյուղի Մ. Նալբանդյան 7 բնակելի տուն անվանմամբ անշարժ գույքը: Ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02092022-04-0071 վկայականի՝ հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման է, շինությունների նպատակային նշանակությունը՝ բնակելի իսկ շինությունների տեսակը՝ բնակելի տուն և ավտոտնակ: Ըստ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշման N 1 հավելվածի՝ բնակելի նպատակային նշանակության շենքերը և շինությունները նախատեսված չեն գազաբալոնների տեղադրում, վկայագրում կամ նմանատիպ այլ գործունեության իրականացնելու համար: Որպես Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիայի գործունեության իրականացման արտադրական բազա անհրաժեշտ է ներկայացնել արտադրական (բացառությամբ գյուղատնտեսական արտադրական նշանակության տարածքների) կամ հասարակական (բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերում առկա հասարակական նշանակության տարածքների) նշանակության տարածք:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ներկայացված հայտը ենթակա է մերժման՝ ներկայացված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Կազմակերպությունը չի ներկայացրել նոր նյութեր և չի վերացրել հայտին կից փաստաթղթերում առկա թերությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱԶ ԱՂԱՍԻ ԿԱՌԼԵՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ | 0 կողմ, 5 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2021 թվականի ապրիլի 15-ի 600-Ն որոշման պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**1.6** Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Արմեն Սամվելի Վարդանյանի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 3-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 10-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո 18.10.2022թ. ԱՍ/25.1/27797-2022 գրությամբ հայտատուին տեղեկացվել է լիցենզիայի տրամադրման հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ:

Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 11-ին ներկայացրել է լրացուցիչ նյութեր, մասնավորապես՝ արտադրական բազայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածության մասին Ձև 6 տեղեկանքը և տարածքի հատակագիծը:

Կազմակերպության կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վարսեր գյուղի Երևան-Սևան խճուղի 3 հասցեում գտնվող արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կազմակերպության սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման

տեղամասերում բացակայում են գազաբալոնների փականների ու անցումային կցիչների ապամոնտաժման ու մոնտաժման կայանքը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ | 0 կողմ, 5 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում**

**2.1** Քննարկվեց՝

<<ՄԵԳԱՏԵՍՏԻՆԳ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հոկտեմբերի 27-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 13-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի հոկտեմբերի 27-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: 2022 թվականի նոյեմբերի 13-ին, ի պատասխան հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերացման գրության՝ Կազմակերպությունը ներկայացրել է նոր նյութեր՝ ամբողջովին վերացնելով թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| <<ՄԵԳԱԹԵՍՏԻՆԳ>> ՍՊԸ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2.2** Քննարկվեց՝

<<ՏԵՍՏԱՎՏՈ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 7-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 15-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 7-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: 2022 թվականի նոյեմբերի 15-ին, ի լրումն ներկայացված հայտի՝ Կազմակերպությունը ներկայացրել է նոր նյութեր՝ ամբողջովին վերացնելով թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| <<ՏԵՍՏԱՎՏՈ>> ՍՊԸ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2.3** Քննարկվեց՝

<<ԱՐՏԻԱՐ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 16-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության 2022 թվականի նոյեմբերի 7-ին ներկայացրած հայտը և հայտին կից փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| <<ԱՐՏԻԱՐ>> ՍՊԸ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2.4** Քննարկվեց՝

<<ԱՎՏՈՊՈՍՏ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 8-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00055 լիցենզիայի՝ թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի նոր ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից ստացել է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00055 լիցենզիան ունիվերսալ հոսքագծի ներդիրով՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թումանյան փողոց 143/8 հասցեում:

Կազմակերպությանը 2022 թվականի նոյեմբերի 7-ին ներկայացրել է հայտ՝ նույն տարածքում թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի նոր ներդիր ստանալու համար, իսկ նոյեմբերի 8-ին ներկայացրել է լրացուցիչ նյութեր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| <<ԱՎՏՈՊՈՍՏ>> ՍՊԸ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2.5** Քննարկվեց՝

ԱՐՄԻԿ ԺՈՐԱՅԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի նոյեմբերի 25-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության 2022 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացրած հայտը և հայտին կից փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ԱՐՄԻԿ ԺՈՐԱՅԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված

կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**3. Անհատ ձեռնարկատեր Արա Ալբերտի Դավթյանի Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00051 լիցենզիան և 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:**

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Արա Ալբերտի Դավթյանի 2022 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00051 լիցենզիան և 0001 ներդիրն ուժը կորցրած կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր Արա Ալբերտի Դավթյանի 2022 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00051 լիցենզիան և 0001 ներդիրն ուժը կորցրած կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ԱՐԱ ԱԼԲԵՐՏԻ ԴԱՎԹՅԱՆ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**4. Անհատ ձեռնարկատեր Արսեն Նորիկի Վարդանյանի տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00050 լիցենզիան և 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:**

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Արսեն Նորիկի Վարդանյանի 2022 թվականի նոյեմբերի 25-ի դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00050 լիցենզիան և 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Անհատ ձեռնարկատեր Արսեն Նորիկի Վարդանյանի 2022 թվականի նոյեմբերի 25-ի դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00050 լիցենզիան և 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՁ ԱՐՍԵՆ ՆՈՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ | 5 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան